26/11/2025թ.

ՀՀ Էկոնոմիկայի նախարար
պարոն Գևորգ Պապոյանին
Պանդո համայնքային զարգացման ՀԿ
նախագահ՝ Անդրանիկ Պապոյանից

Դիմում

Հարգելի՛ պարոն Պապոյան,

Խնդրում ենք Պանդո համայնքային զարգացման հասարակական կազմակերպությունը ընդգրկել ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կազմակերպության անունից խորհրդի աշխատանքներին մասնակցելու և այն ներկայացնելու համար առաջադրում ենք ՀԿ նախագահ՝ Անդրանիկ Պապոյանի թեկնածությունը:

Վստահ ենք, որ մեր կազմակերպության փորձը և մասնագիտական ներգրավվածությունը կնպաստեն խորհրդի արդյունավետ գործունեությանը և ոլորտայի դրական փոփոխությունների գործընթացին:

Հարգանքով,

Պանդո ՀԶՀԿ նախագահ՝
Անդրանիկ Պապոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2021-09-07

«ՊԱՆԴՈ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ Հասարակական կազմակերպություն (ՀԿ)

Գրանցման համար	211.171.1194630
Հիմնադրման տարի	2021
Գրանցման ամսաթիվ	2021-09-07
Գործունեության ժամկետ	Անժամկետ
Կարգավիճակ	Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	52820522
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	05552919
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	0174630
Էլ. փոստ	-
Կայք	-

Գտնվելու վայրը

Հասցե	35 Փ. / Տ / 2 ՄԱՐՄԱՇԵՆ 2618 ՄԱՐՄԱՇԵՆ ՇԻՐԱԿ ՀԱՅԱՍՏԱՆ
Հեռախոս	+374 98 12 35 54

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն	Նախագահ
Անուն Ազգանուն	ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՊՈՅԱՆ ՄԱՆՎԵԼԻ
Անձնագրային տվյալներ	AR0510603 2017-11-15 030
Հասցե	35 Փ. / Տ / 2 ՄԱՐՄԱՇԵՆ 2618 ՄԱՐՄԱՇԵՆ ՇԻՐԱԿ ՀԱՅԱՍՏԱՆ

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Պետական միասնական գրանցամատյանում փոփոխություններ կատարված չեն

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ

Քաղվածքը տրամադրող՝ _____ **Հարություն Քիշմիշյան**
ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ **07-09-2021**

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

Կազմված է 06.04.2021 թվականին,
բաղկացած է 15 թերթից

Հաստատված է

«Պանդո» համայնքային զարգացման
հասարակական կազմակերպության

հիմնադիր ժողովի
06.04.2021թվականի որոշումով

Նախագահ՝ _____

Անդրանիկ Պապոյան

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
Օրինակ -2
ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ

«07» 09 2021թ.

գրանցման թիվ 221.193.194630

Հարկ վճարողի հաշվառման համար

05552989

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՊԱՆԴՈ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Գյումրի 2021թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Պանդո» համայնքային զարգացման հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

1.2 Կազմակերպությունը գործում է ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.3 Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը, բարեխղճությունը, հաշվետվողականությունը:

1.4 Կազմակերպությունը գործում է ՀՀ ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.5 Կազմակերպությունն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով և խորհրդանշով կլոր կնիք, դրոշմ, հաշվարկային հաշիվ բանկում՝ ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով:

1.6 Կազմակերպության անվանումն է՝

Հայերեն լրիվ՝ «Պանդո» համայնքային զարգացման հասարակական կազմակերպություն, կրճատ՝ «Պանդո» ՀԶՀԿ, հապավումը՝ ՊՀԶՀԿ:

Ռուսերեն լրիվ՝ Общественная организация развития сообщества “Пандо”, կրճատ՝ “Пандо” РСОО, հապավումը՝ ПРСОО:

Անգլերեն լրիվ՝ “Pando” community development non-governmental organization, կրճատ՝ “Pando” CDNGO, հապավումը՝ PCDNGO:

1.7 Կազմակերպությունն ունի խորհրդանիշ, որում անգլերեն սև գույնով և փոքրատառերով գրված է pando, իսկ ներքևը պատկերված է ձեռքսեղմում, ծառերի արմատների ճյուղաավորման տեսքով, որը արտացոլում է ծառերի արմատների խորությունն ու ամրությունը, վերջինս էլ բնորոշում է համագործակցության խորությունն ու ամրությունը:

Խորհրդանիշի պատկերը կցված է սույն կանոնադրությանը:

1.8 Կազմակերպությունն իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում պետական գրանցման պահից:

1.9 Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, Շիրակի մարզ, Մարմաշեն համայնք, գյուղ Մարմաշեն, 35 փողոց, տուն 2:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1 Կազմակերպության գործունեության առարկան ու նպատակներն են՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով՝

Կազմակերպության առաքելությունն է՝ իրականացնել բազմաբնույթ ծրագրեր և միջոցառումներ, որոնք նպատակաուղղված կլինեն հասարակության հիմնախնդիրների լուծմանը:

- իրականացնել ուսուցողաճանաչողական ծրագրեր, որոնց նպատակն է երիտասարդներին ծանոթացնել մեղվաբուծության հմտություններին ու գաղտնիքներին, կազմակերպել դասընթացներ՝ հմուտ մեղվապահների ներգրավմամբ,
- նպաստել գյուղական տուրիզմի զարգացմանը,
- կազմակերպել գյուղական համայնքների կենցաղի ակտիվ ներգրավմամբ զբոսաշրջային տուրեր,
- նպաստել երիտասարդության շրջանում գյուղական համայնքների նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը,
- աջակցել երիտասարդների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը,
- ներգրավել երիտասարդներին շարունակական ոչ ֆորմալ կրթական գործընթացներում,
- զարգացնել առողջ ապրելակերպի մշակույթը երիտասարդության շրջանում,
- մեծացնել երիտասարդության մասնակցությունը մշակութային կյանքում,
- բարձրացնել երիտասարդների մրցունակությունը աշխատաշուկայում,
- խթանել երիտասարդների նախաձեռնողականությունը,
- մեծացնել երիտասարդների դերը հասարակական հիմնախնդիրների լուծման գործում,
- աջակցել երիտասարդների նորարար գաղափարների իրականացմանը,
- աջակցել երիտասարդների ձեռներեցությանը,
- զարգացնել կամավորության մշակույթը երիտասարդության շրջանում,
- նպաստել հասարակության մեջ երիտասարդության դերի բարձրացմանը,
- բարձրացնել երիտասարդների իրավագիտակցության մակարդակը,
- ամրապնդել երիտասարդների և որոշում կայացնողների միջև երկխոսությունը,
- իրազեկել հանրությանը երիտասարդության հիմնախնդիրների մասին,
- պաշտպանել երիտասարդների շահերն ու իրավունքները,
- մշակել և իրականացնել ժողովրդավարական արժեքների տարածմանն ու ամրապնդմանն ուղղված տարաբնույթ ծրագրեր և միջոցառումներ, որոնք կնպաստեն իրավական պետության զարգացման խթանմանը,
- կազմակերպել և իրականացնել քաղաքացիական հասարակության կայացմանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ,
- աջակցել սոցիալապես անապահով ընտանիքներին, ծնողազուրկ, ոստիկանությունում հաշվառման տակ գտնվող անչափահասներին և նրանց ընտանիքներին,

- նպաստել հասարակության շրջանում սոցիալական աջակցման, զբաղվածության, կրթական և այլ հիմնախնդիրների լուծմանը,
- իրականացնել այնպիսի ծրագրեր, որոնք կնպաստեն սոցիալապես խոցելի խմբերի խնդիրների լուծմանը և նրանց ինտեգրմանը հասարակություն,
- մշակել և իրականացնել տարածաշրջանային երկրների ակտիվ հասարակության անդամների միջև միջմշակութային հաղորդակցության զարգացմանն ուղղված ծրագրեր, որոնք կնպաստեն վերոնշյալ երկրների միջև փոխհամագործակցության և փոխվստահության ամրապնդմանը,
- իրականացնել երիտասարդական փոխանակման, կամավորական և կրթական ծրագրեր,
- կազմակերպել և իրականացնել այնպիսի ծրագրեր և միջոցառումներ, որոնք կնպաստեն բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը,
- նպաստել համայնքում գյուղատնտեսության տարբեր ճյուղերի զարգացմանը ձեռներեցային ծրագրերի իրականացման միջոցով,
- օգնել զինվորներին և նրանց ընտանիքներին, նպաստել Արցախի, Սփյուռքի և Հայաստանի Հանրապետության միջև կապերի զարգացմանն ու ամրապնդմանը,
- նպաստել դեռահասների և պատանիների շրջանում ռազմահայրենասիրական և ազգային ոգու բարձրացմանը, առողջ ապրելակերպի խթանմանը, ռազմահայրենասիրական դաստիարակության իրականացմանը, միջսերնդային կապի ամրապնդմանը, հասարկության ֆիզիկական պատրաստվածության բարձրացմանը ուղղված բազմաբնույթ ծրագրերի մշակմանը և իրականացմանը,
- կազմակերպել և իրականացնել բազմաբնույթ երիտասարդական ծրագրեր և միջոցառումներ,
- նպաստել այլընտրանքային գյուղատնտեսության կայացմանը գյուղական համայնքներում,
- մշակել և իրականացնել այնպիսի ծրագրեր, որոնք կնպաստեն գյուղաբնակ երիտասարդական խմբերի շրջանում բնապահպանական մշակույթի և նորարական գյուղատնտեսության նկատմամբ հետաքրքրության ավելացմանը և նրանց ներգրավվածությանը ծրագրեր իրականացնելիս,
- նպաստել հասարակության շրջանում այլընտրանքային գյուղատնտեսության մասին տեղեկատվության մեխանիզմների տարածմանը,
- իրականացնել դիտորդական առաքելություն,
- նպաստել գյուղական ոլորդում տեխնոլոգիական նորարարությունների կիրառման եղանակների և գյուղատնտեսության վերաբերող այլ նորամուծությունների վերաբերյալ ուսուցողական դասընթացների կիրառմանը և դրանց ներդրմանը գյուղական համայնքներում:
- Իրականացնել մոնիթորինգ և հետազոտություն,
- Նպաստել հասարակության մեջ գենդերային հավասարությանը, հավասար հնարավորություններին և խտրականության վերացմանը:

2.2 Կազմակերպությունը կարող է իրականացնել սույն կանոնադրությունից բխող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:
2.3 Իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար կազմակերպությունը համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և օտարերկրյա համանման կազմակերպությունների, ՀՀ-ում գրանցված այլ կազմակերպությունների, ինչպես նաև անհատների և ոչ ֆորմալ խմբերի հետ:
2.4 Հասարակական կազմակերպությունը չի կարող ունենալ այնպիսի նպատակներ, որոնք օրենքով վերապահված են կուսակցությանը, կրոնական կազմակերպությանը, արհեստակցական միությանը կամ այլ հասարակական միավորմանը:

3.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Կազմակերպությունը իր խնդիրների իրականացման համար միջոցներ հայթայթելու նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է կազմակերպել տարբեր բնույթի և ծավալի միջոցառումներ, ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ՝ արտերկրում:
3.2.Կազմակերպությունը կարող է օրենքով սահմանված կարգով ստեղծել տնտեսական ընկերություններ և նրանց միջոցով իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, որից ստացված եկամուտները կուղղվեն կազմակերպության նպատակներին: Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անձամբ կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան:
3.3. Իր նպատակների և խնդիրների իրականացման համար կազմակերպությունը կարող է իրականացնել նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:
3.4. Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է ունենալ լրատվական միջոցներ և ունենալ տպագիր մարմիններ:
3.5. Կազմակերպությունը պատասխանատու չէ իր անդամների անհատական գործունեության համար:

4.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1. Կազմակերպության անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա ցանկացած քաղաքացի, ինչպես նաև ցանկացած իրավաբանական անձ, որը ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը, նպատակային խնդիրների իրականացմանը և ընդունում է Կազմակերպության կանոնադրությունը:

4.2. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը, իսկ իրավաբանական անձի դեպքում իրավասու մարմնի կողմից լիազորված անձը՝ իրավասու մարմնի որոշման հիման վրա, գրավոր դիմում է Կազմակերպության գործադիր մարմնին:

4.3. Մինչև տասնչորս տարեկան անչափահասը Կազմակերպությանը կարող է անդամագրվել իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա:

Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, Կազմակերպությանը կարող է անդամագրվել իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:

4.4.Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Կազմակերպության գործադիր մարմինը:

4.5. Կազմակերպությանն անդամագրված անձն ազատ է դուրս գալու Կազմակերպությունից, իր դիմումի հիման վրա, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ իրավասու մարմնի որոշման հիման վրա՝ գործադիր մարմնի որոշմամբ:

4.6. Կազմակերպության անդամությունից հեռացումը տեղի է ունենում գործադիր մարմնի որոշմամբ:

Կազմակերպության անդամին Կազմակերպության անդամությունից հեռացնելու մասին որոշման հիմք կարող են հանդիսանալ.

ա) Կազմակերպության անդամի կողմից իր պարտականությունները չկատարելը.

բ) Կազմակերպության անդամի կողմից Կազմակերպության կանոնադրությանն ու նպատակներին հակասող գործողություններ կատարելը:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1.Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

- Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտրել և ընտրվել Կազմակերպության ղեկավար կառավարման մարմիններում.
- ներկա գտնվել Ժողովին անձամբ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նաև լիազորված անձի միջոցով,
- անվճար կարգով օգտվել Կազմակերպության ծառայություններից.

- ծանոթանալ Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները.
- վերադասության կամ դատական կարգով բողոքարկել Կազմակերպության մարմինների որոշումները:
- Կազմակերպությունից պահանջել տեղեկություններ, ստանալ փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին.
- իրականացնել օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

5.2. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

- կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները.
- մուծել անդամավճար՝ Ժողովի կողմից սահմանված լինելու դեպքում, որոնց չափն ու վճարման կարգը սահմանում է Ժողովը.
- բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները:

5.3. Կազմակերպության անչափահաս անդամների իրավունքների և պարտականությունների առանձնահատկություններ չեն նախատեսվում: Կազմակերպության անչափահաս անդամներն ունեն Կազմակերպության անդամների համար սույն կանոնադրությամբ նախատեսված միևնույն իրավունքները, բացառությամբ Կազմակերպության մարմիններում ընտրվելու իրավունքի, և կրում են միևնույն պարտականությունները:

5.4.Կազմակերպության կանոնադրությունը խախտող կամ իր պարտականությունները չկատարող անդամի նկատմամբ Կազմակերպության գործադիր մարմնի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողություն, Կազմակերպության անդամությունից հեռացում:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը, իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

1) իր անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող.

2) բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով.

3) ստեղծելու այլ կազմակերպություն կամ լինելու նրա մասնակից.

4) ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ.

5) տեղեկատվություն տարածելու իր գործունեության մասին.

6) կազմակերպելու և անցկացնելու խաղաղ, առանց զենքի հավաքներ.

7) օրենքով սահմանված կարգով ներկայացնելու ու պաշտպանելու իր և իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում.

8) համագործակցելու այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծելու Կազմակերպություն կամ անդամակցելու նրանց ստեղծած Կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը.

9) Կանոնադրությամբ նախատեսված ոլորտներում տրամադրել իրավաբանական խորհրդատվություն.

10) կատարելու օրենքով չարգելված այլ գործողություն:

6.2. Կազմակերպությունը պարտավոր է՝

1) վարել իր անդամների և կամավորների հաշվառումը.

2) Եթե Կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում պետական կամ համայնքային միջոցներից ֆինանսավորվել է 10 միլիոն և ավելի Հայաստանի Հանրապետության դրամի չափով, ապա այդ միջոցների օգտագործման վերաբերյալ Լիազոր մարմնի սահմանած հաշվետվությունը, որպես հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություն, ենթակա է պարտադիր աուդիտի՝ «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի համաձայն:

3) պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը.

4) «Հասարակական Կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Լիազոր մարմին) պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր.

5) Կազմակերպության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, ժողովի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը.

6) Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն.

7) իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության գործադիր մարմնի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը.

8)Կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող մայիսի 30-ը, Կազմակերպությունների կողմից հրապարակվող էլեկտրոնային հաշվետվությունների համար նախատեսված համակարգի (այսուհետև՝ Համակարգ) անձնական էջում և իր պաշտոնական ինտերնետային կայքում (այդպիսին ունենալու դեպքում) օրենքով սահմանված կարգով հրապարակել գործունեության տարեկան հաշվետվությունը: Կազմակերպությունների կողմից Համակարգի անձնական էջում հաշվետվությունը հաստատելու դեպքում, այն հրապարակվում է Պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության պաշտոնական ինտերնետային կայքում, որը հասանելի է յուրաքանչյուրին: Կազմակերպության հաշվետվությունը պահպանվում է հինգ տարի ժամկետով.

9) կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

6.3. Կազմակերպության մարմինները նրա անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն՝ ի շահ Կազմակերպության:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Կազմակերպության կառավարման մարմիններն են՝ ժողովը և գործադիր մարմինը /նախագահը/:

7.1. Կազմակերպության գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ Ժողովին:

7.2. Կազմակերպության հերթական ժողովը հրավիրվում է 5 տարին մեկ անգամ: Կազմակերպության հերթական ժողովը հրավիրում է գործադիր մարմինը՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ եթե դա հնարավոր չէ, ապա հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ կազմելով համապատասխան արձանագրություն: Գործադիր մարմինը /նախագահը/ որոշում է ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ քան 20 օրվանից առաջ պատվիրված նամակով, կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է կազմակերպության անդամներին և կառույցներին:

7.3. Կազմակերպության արտահերթ ժողով հրավիրվում է գործադիր մարմնի նախաձեռնությամբ, կամ Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ գործադիր մարմնի կողմից.

7.4. Կազմակերպության արտահերթ ժողովը գումարվում է վերոնշյալ նախաձեռնությունից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում: Արտահերթ ժողով գումարելու ժամանակի և վայրի մասին ժողովի մասնակիցները ծանուցվում են արտահերթ ժողով անցկացնելու օրվանից 5 օր առաջ:

7.5. Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

- Կազմակերպության կանոնադրության հաստատումը, փոփոխումը լրացում կատարելը և նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը.
- Կազմակերպության գործադիր մարմնի ընտրությունը, փոփոխումը, ետ կանչումը և լիազորությունների դադարեցումը.
- Կազմակերպության լուծարման (բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի) և վերակազմակերպման մասին որոշմների ընդունումը.
- ստեղծել այլ իրավաբանական անձ, կամ այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին որոշման ընդունումը.
- Կազմակերպության կառուցվածքի հաստատումը.
- Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը
- Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների ընդունումը.
- Կազմակերպության գործադիր մարմնի վարձատրություն սահմանված լինելու դեպքում վարձատրության կարգի և պայմանների սահմանումը.
- Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի ընտրությունը, եթե օրենքի համաձայն կազմակերպությունը ենթակա է աուդիտի.
- որոշում է անդամավճարների չափերը և դրանց գանձման կարգը, սահմանում է Կազմակերպության անդամների հաշվառում վարելու կարգը և պայմանները,

ինչպես նաև Կազմակերպության անդամների նկատմամբ խրախուսանքի և տույժի միջոցներ կիրառելու կարգը:

- հինգ տարին մեկ հաստատելու գործադիր մարմնի կողմից ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները.
- օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

7.6. Կազմակերպության գործունեությունը վերահսկելու համար սույն կանոնադրությամբ առանձին մարմին չի նախատեսվում ստեղծել:

7.7. Ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե նրան մասնակցում են Կազմակերպության բոլոր անդամների կեսից ավելին: Հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են կազմակերպության բոլոր անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ժողովի արձանագրությունը ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը: Ժողովի արձանագրությունները պահպանվում են 5 տարի:

7.8. Գործադիր մարմինը ընտրվում է ժողովի կողմից հինգ տարի ժամանակով: Կազմակերպության գործադիր մարմինը կազմակերպության նախագահն է: Նախագահը ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և վարում է ժողովի նիստերը:

7.9. Գործադիր մարմնի իրավասությունները ներառում են Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման, ինչպես նաև Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը:

7.10. Գործադիր մարմինը Կազմակերպության կանոնադրությանը և ժողովի որոշումներին համապատասխան՝

- ապահովում է Ժողովի որոշումների կատարումը.
- մինչև հինգ միլիոն դրամ արժողությամբ ցանկացած գույք միանձնյա, իսկ հինգ միլիոնից ավելի արժողությամբ ցանկացած գույք ժողովի հետ համաձայնեցնելով տնօրինում և կառավարում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից.
- ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.
- տալիս է լիազորագրեր.
- բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.

- իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
- հաստատում է կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը.
- հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,
- ընդունում է Կազմակերպության անդամ և ազատում /հեռացնում/ Կազմակերպության անդամությունից,
- հաստատում է Կազմակերպության մարմինների հաշվետվությունները, ինչպես նաև ժողովի գումարմանը նախորդող տարիների Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք 5 տարին մեկ անգամ ներկայացնում է ժողովի հաստատմանը.
- իրականացնում է օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

7.11. Գործադիր մարմինն իր լիազորություններն իրականացնելիս Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի:

7.12. Գործադիր մարմինը կրում է օրենքով նախատեսված պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Կազմակերպության կանոնադրության, ժողովի որոշումների կամ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

8.1. Կազմակերպությունը կարող է իր նպատակներին համապատասխան՝ ունենալ շահառուներ, ինչպես նաև ներգրավել կամավորների իր աշխատանքներում, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության:

8.2. Կազմակերպության շահառուներն են ՀՀ քաղաքացիները, օտարերկրացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, կանայք, երեխաները, դեռահասները, պատանիները, երիտասարդները, աշակերտները, տարեցները, հաշմանդամություն ունեցող անձինք, սոցիալապես անապահով և հատուկ կարիքավոր անձանց խմբերը, կրթական, մշակութային գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք, համայնքները, համայնքի բնակիչները, գիտական, հետազոտական հաստատություններն ի շահ որոնց իրականացվում է Կազմակերպության գործունեությունը:

Կազմակերպությունը կարող է իր աշխատանքներում ներգրավել կամավորներ, որոնց նկատմամբ կիրառվում են «Բարեգործության մասին» ՀՀ օրենքը և ՀՀ

աշխատանքային օրենսգիրքը այնքանով, որքանով այդ կարգավորումները չեն հակասում Օրենքին:

8.3. Եթե կամավորի աշխատանքի տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը, ապա Կազմակերպությունը կամավորների հետ կնքում է կամավոր աշխատանքի մասին պայմանագիր, որը համաձայնություն է կամավորի և Կազմակերպության միջև: Պայմանագրի հիման վրա կամավորն իր կամքով, առանց վարձատրության և որոշակի ժամկետով իրականացնում է կամավոր աշխատանք, իսկ Կազմակերպությունն ապահովում է կամավոր աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ, անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ:

8.4.Արգելվում է կամավորներին ներգրավել Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության մեջ:

8.5. Կամավոր աշխատանքի հետ կապված վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Կազմակերպության գույքը հանդիսանում է Կազմակերպության սեփականությունը:

9.2. Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք: Կազմակերպության անդամը նրա սեփականության նկատմամբ բաժնային իրավունք չունի:

9.3. Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրներ կարող են լինել՝

- ✓ անդամավճարները, դրամական և նյութական ներդրումները,
- ✓ բանկերից կամ վարկային կազմակերպություններից ստացված վարկերը,
- ✓ դրամաշնորհները,
- ✓ բարեգործական ներդրումները, քաղաքացիների և կազմակերպությունների նվիրատվությունները,
- ✓ Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները,
- ✓ Կազմակերպության կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների կողմից փոխանցված գումարները,
- ✓ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերը:

9.4. Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել միայն կազմակերպչական ծախսերի և կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար և չեն կարող բաշխվել անդամների միջև:

10. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

10.1. Կազմակերպությունը կարող է լուծարվել Ժողովի կամ դատարանի որոշմամբ:
10.2. Ժողովը կազմավորում է լուծարման հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Կազմակերպության լուծարման ավարտին լուծարման հանձնաժողովը, պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը, Ժողովի որոշմամբ սահմանված կարգով, օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ, եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:
10.3. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Հավելված 1

«Պանդո» համայնքային զարգացման հասարակական կազմակերպության խորհրդանիշի պատկերը

Սույն կանոնադրությունը կազմված է 06.04.2021թ. և բաղկացած է 15 թերթից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

ԱԶԳԱՆՈՒՆԸ
ՊԱՊՈՅԱՆ

ՍԵՌԸ
Ա

ԱՆՈՒՆԸ
ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՆՎԵԼԻ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԾՆՎԵԼ Է
04.03.1992

ԾՆՆԴԱՎԱՅՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԵԼ Է
06.10.2023

ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ
06.10.2033

ՈՒՄ ԿՈՂՄԻՑ
030

ԱՆՁՆԱԳՐԻ ՏԻՐՈՋ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ/SIGNATURE OF HOLDER

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

PASSPORT

TYPE	COUNTRY CODE	PASSPORT No
P	ARM	AL0455814

SURNAME(S)
PAPOYAN

NAME
ANDRANIK

NATIONALITY REPUBLIC OF ARMENIA

DATE OF BIRTH
04 MAR 1992

PERSONAL No.

SEX
M

PLACE OF BIRTH
REPUBLIC OF ARMENIA

DATE OF ISSUE
06 OCT 2023

DATE OF EXPIRY
06 OCT 2033

AUTHORITY
030

P<ARMPAPOYAN<<ANDRANIK<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<
AL04558144ARM9203044M3310067<<<<<<<<<<<<<<<02

ԱՆՁՆԱԳԻՐԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ

THIS PASSPORT IS VALID FOR FOREIGN
COUNTRIES UNTIL:

12.05.2033

ՀՀ Արարատի
մարզային 35ի գրասենյակ
30 05 12 թ. Երևան

AL 0455314

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՔԱՐՏ

Քարտի համարը **1403920397**

Ազգանունը ՊԱՊՈՅԱՆ

Անունը ԱՆԴՐԱՆԻԿ

Հայրանունը ՄԱՆՎԵԼԻ

Տրամադրված է՝ 24 08 2009

Հիմքը՝ ԱՆՁՆԱԳԻՐ -- AH0564597

Reply Reply All Forward

Mon 11/24/2025 8:00 AM

PC

Pando CDNGO <pando.cdngo@gmail.com>

ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարարակական խորհրդ

To PR of the Ministry of Economy

Cc Angelina K. Chilingaryan

Follow up. Start by Monday, November 24, 2025. Due by Monday, November 24, 2025.

Some of the content in this message couldn't be downloaded because you're working offline or aren't connected to a network.

Պանդո համայնքային զարգացման հասարակական կազմակերպություն:

- կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը,
  Պանդո համայնքային զարգացման հասարակական կազմակերպություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք
- ֆիզիկական անձի անունը, ազգանունը,
  Անդրանիկ Պապոյան
- համայնքը կամ մարզը, որտեղ ծավալում են գործունեություն,
  Շիրակի մարզ, Ախուրյան համայնք
- գործունեության ոլորտը, որում ունեն փորձ կամ մասնագիտական փորձառություն և հայտատուի հայեցողությամբ այլ տեղեկություններ:
  Պանդո ՀԿ-ի գործունեության ոլորտներն են՝
  Երիտասարդների հզորացում
  Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացում
  Մարդու իրավունքներ և քաղաքացիական կրթություն
  Կայուն զարգացում և բնապահպանություն

  Կից պանակում կարող եք տեսնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:
- Պանդո ՀԿ-ի պետական ռեգիստրի վկայականը
- Պանդո ՀԿ-ի կանոնադրությունը
- Անդրանիկ Պապոյանի անձնագիրը և սոց. քարտը:
  Այստեղ

ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարարական խորհրդին միանալու նպակակով առաջադրում ենք՝
Պանդո ՀԿ-ի նածագահ՝ Անդրանիկ Պապոյանի թեկնածությունը
Էլ. փոստ՝ andranik.papoyan01@gmail.com
Հեռ.՝ 041788889

Հարգանքով՝ Պանդո ՀԿ
Best regards՝ Pando NGO

Right-click or tap and hold here to download pictures. To help protect your privacy, Outlook prevented automatic download of this pictur...

Andranik Papoyan

Mobile.: +374 41788889

E-mail: andranik.papoyan01@gmail.com

Education

- 2012-2017 Yerevan State University ,Faculty of Economics, Theory of Economics:
- 2009-2010 Shirak State University, physical culture and sports
- 2008-2009 "Business Elita" computer courses
- 1999-2009 State Secondary School After M. Mkoyan

Work Experience

- 2022 September – Pando CDNGO
- 2022 April - "KASA" Swiss Humanitarian Foundation
- 2021 April-2022 march "Caritas Armenia" benevolent NGO
- 2021 March-April "AM Partners" Consulting Company
- 2017 Sept- 2020 Sept "TUMO" center of creative technologies
- 2019 Jun-2020 July "BetConstruct" internal audit
- 2015-2019 Caucasian Institute for Peace Problems Research-volunteer, project coordinator
- 2017-2019 Caucasus Research Resource center-Armenia
- 2018 July TOBE Youth Camp-group leader
- 2017 Jun-Aug Zepyur Youth Camp-Camp coordinator
- 2012-2016 World Vision Armenia - Group leader
- 2016-2017 "Diamond Restaurant"
- 2016-2017 Armenian Catholic Church summer camp-group leader
- 2014 August Family Center summer camp-group leader

- 2014, July“Come Home” project youth-group leader

Languages

- Armenian
- Russian
- English

Computer Skills

- Microsoft Word, Excel, Power Point

Volunteer work

- World VisionInternation Organization
- Art non-governmental organization
- Shirak Marz Social Educational Center
- “KASA” Swiss Humanitarian Foundation
- Youth Initiative Center (YIC)

Non-formal education

- 2018 March -1 April “Dialogue through theatre” Y-Peer Armenia, Gyumri Armenia
- 2017 July-DecemberEkolab FoundationRe.Actionproject, Vanadzor, Armenia
- 2017 November ´´Promotion of participatory democracy and civic activism ´´Gyumri, Armenia
- 2017 22-27 October, “Democracy Academy” Aghveran, Armenia
- 2017 23-27 August “Tnak” project Vayk, Armenia
- 2017 July 4-10 “Armenian-Turkish Forum Theatre”
- 2017 June 2-11 International Youth Exchange “Being Green” Sumy Ukraine
- 2017 May 20-27 Empowering women in the context of gender equality and human rights. Yerevan, Armenia
- 2015 15-20 June, Youth participation at local level workshop, CIPPR NGO
- 2014 18-23 November, Youth Peace Theatre implemented by CIPPR NGO, with support of USA embassy, Gyumri. Armenia